Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակությունը

Վերապատրաստող մենթոր՝ Փ. Սարգսյան

Կատարող՝ Սիրանուշ Լուլուկյան

Վաղարշապատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Թեմա 1 Էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնախնդրի մշակվածության աստիճանը և հրատապությունը—---------5

Թեմա 2 Կրտսեր դպրոցականների դաստիարակության և զարգացման առանձնահատկությունը—----------8

Հավելվածներ—----------12

Եզրակացություն—----------17

Գրականության ցանկ—----------18

Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ 21-րդ դարում մարդկությունը կանգնած է բավականին լուրջ էկոլոգիական աղետի առջև: Մարդկանց բացասական և անպատասխանատու ազդեցության և գործունեության հետևանքով կարող է խախտվել «մարդ–բնություն հասարակություն» փոխգործակցության հավասարակշռությունը, իսկ այն վերականգնելու համար անհրաժեշտ կլինեն մարդկային մեծ ջանքերի գործադրում: Շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական հետևանքները վերանցնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝ որոնցում գերակա տեղ է զբաղեցնում անձի էկոլոգիական դաստիարակության և կրթության խնդիրը: Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին ՀՀ օրենքը նշում է՝ <<էկոլոգիական կրթության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը և համալիր բնույթը>>: Այս դրույթը փաստում է ազգաբնակչության էկոլոգիական կրթությունն շարունակական գործընթաց է և այն համարվում է առաջնահերթ և կարևոր խնդիր: Տարրական դպրոցը որպես անձի կրթության և դաստիարակության առաջնային և կարևորագույն օղակ գերակա խնդիր ունի `լուծել անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Էկոլոգիական դաստիարակության և կրթության հիմքը դրվում է տարրական դասարաններում՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի, հետո՝ շարունակվում << Բնագիտություն>> առարկաների ուսուցմամբ: Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պետք է իրականացնել դաստիարակության մյուս ձևերին զուգընթաց՝ գեղագիտական, բարոյական, մշակութային, տնտեսագիտական և այլն:

Աճող սերնդի Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես կրթական համակարգի և մանկավարժական հետազոտությունների գերակա ուղղություն, ընդունված է 1977 թվականին Մոսկվայում կայացած մանկավարժների միջազգային համաժողովում: Աշակերտների մոտ բնության նկատմամբ պատասխանատու և հոգատար վերաբերմունք ձևավորվելու նպատակով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների պրակտիկ գործունեությանը (շաբաթօրյակներ, արշավներ, ծառատունկ և այլն): Ունենալով բավականին տեսական գիտելիքներ էկոլոգիայից՝ սովորողները բնաճանաչողական և բնապահպանական աշխատանքների ընթացքում ձեռք են բերում էկոլոգիական կարողություններ և հմտություններ, որն էլ ակտիվացնում է նրանց ճանաչողական գործունեությունը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության

տարբեր միջոցների և ձևերի կիրառման արդյունքում իրականցվում են դպրոցականների կոլեկտիվում աշխատելու հմտությունները, հարստանում է սոցիալական փորձը, որի նպատակն է նախապատրաստել նրանց հասարակություն մեջ ակտիվ կյանքի, և անձնային որակների դրսևորմանը:Ուստի հենց տարրական դպրոցում պետք է դրվի էկոլոգիական դաստիարակության հիմքը, որը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում:

Մեր հետազոտության նպատակն է՝ դպրոցում Էկոլոգիական կրթության բովանդակության ուսումնասիրությունն ու էկոլոգիական դաստիարակության իրականացման արդյունավետ ձևերի մշակումը:

Հետազոտության խնդիրներն են ՝

1. Վերլուծել հիմնախնդրի շուրջ առկա մանկավարժահոգեբանական գրականությունը:
2. Բացահայտել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության առկա վիճակը:
3. Մշակել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ ձևեր:

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է մեր կողմից մշակված ձևերի, մեթոդներ, առաջարկությունների կիրառումը մանկավարժական պրակտիկայում կարող են նպաստել դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացի կատարելագործմանը:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու բաժնից, հավելվածներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԹԵՄԱ 1 Էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնախնդրի մշակվածության աստիճանը և հրատապությունը

Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ: 21-րդ դարը կարող է իրավամբ համարվե էկոլոգիայի դար, էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը վերջին տարիներին դարձել են ոչ թե ցանկալի, այլ անհրաժեշտ պայման: Էկոլոգիան հին հունարենից թարգմանաբար նշանակում է գիտություն տան մասին, առաջացել է հունական «oikos » (տուն, բնակարան, կացարան), «logos» (գիտություն, ուսմունք բուսական և կենդանականօրգանիզմների հետ միմյանց) և շրջապատող միջավայրի հետ նրանց ունեցած մասին: Էկոլոգիան որպեսգիտություն ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին (1866թ) «էկոլոգիա» հասկացությունը առաջ է քաշել գերմանացի գիտնական Էռնեստ Հեկկելը, «Օրգանիզմների համընդհանուր մորֆոլոգիա աշխատության մեջ», իսկ առաջին աշխատանքները էկոլոգիական հիմնախնդիրների մասին պատկանում է Չարլզ Դարվինին: Սկզբում էկոլոգիան բնորոշ էր որպես կենդանի օրգանիզմների միջավայրի և միմյանց հետ փոխհարաբերությունների գիտություն: Այժմ այս ուղղությունը կոչվում է կենսաբանական կամ դասական էկոլոգիա: Սակայն մեր դարում էկոլոգիան դուրս է եկել կենսաբանության շրջանակներից՝ ներառելով նաև հասարակական ոլորտը: Էկոլոգիան երկար ժամանակ մնաց զուտ կենսաբանական գիտություն, որը հետաքրքրում էր միայն գիտնականներին: Եվ միայն 21-րդ դարի կեսերին էկոլոգիան ընդգրկվել է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն դարձել է գիտություն, որը պետք է օգնի մարդկանց գոյատևել, իրենց կենսապայմանների ընդունելի դարձնել գոյության համար: Տարրական դպրոցը, որպես կրթական համակարգի կարևորագույն օղակ, կոչված է լուծելու կրտսեր դպրոցականների էկոլոգական դաստիարակության խնդիրները, ուստի էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը համարվում են տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի գերակա ուղղություններից մեկը: Էկոլոգիական դաստիարակությունը, որպես անձի ամբողջական դաստիարակության բաղադրամաս՝ իրականացվում է դաստիարակության մյուս ուղղությունների՝ գեղագիտական, բարոյական, աշխատանքային, քաղաքացիական, տնտեսագիտական, իրավական, ընտանեկան դաստիարակության հետ: Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային և կարևորագույն գործոնը էկոլոգիական կրթությունևէ, որը տրվում է ուսումնական առարկաների՝ «Ես և շրջակա

աշխարհ»,«մայրենի», «մաթեմատիկա», «կերպարվեստ», «երգ – երաժշտություն»,«տեխնոլոգիա» և այլ առարկաների միջոցով: Բացի դպրոցից էկոլոգիական դաստիարակություն իրականացվում է բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբակներում: Էկոլոգիական դաստիարակության և կրթության մեջ առանձնակի կարևորվում է բարոյական տեսանկյունը, որը իրենից ներկայացնում է պատշաճ վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ:

Երեխաների էկոլոգիական կրթությունն իրականացվում է երեք փոխկապակցված գործընթացների՝ կրթության, դաստիարակության և զարգացման միջոցով, այն ուղղված է անձի բնապահպանական մշակույթի զարգացմանը, մարդկային փոխազդեցության և հոգևոր փորձի հարստացմանը՝ ապահովելով դրա գոյատևումը և զարգացումը:

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում: Կրտսեր դպրոցականների Էկոլոգիական կրթության բովանդակությունը, նպատակներն և խնդիրները մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ: Սկզբում էկոլոգիան բնորոշ էր որպես կենդանի օրգանիզմների միջավայրի և միմյանց հետ փոխհարաբերությունների գիտություն: Այժմ այս ուղղությունը կոչվում է կենսաբանական կամ դասական էկոլոգիա: Սակայն մեր դարում էկոլոգիան դուրս է եկել կենսաբանության շրջանակներից՝ ներառելով նաև հասարակական ոլորտը: Էկոլոգիան երկար ժամանակ մնաց զուտ կենսաբանական գիտություն, որը հետաքրքրում էր միայն գիտնականներին: Եվ միայն 21-րդ դարի կեսերին էկոլոգիան ընդգրկվել է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն դարձել է գիտություն, որը պետք է օգնի մարդկանց գոյատևել, իրենց կենսապայմանների ընդունելի դարձնել գոյության համար:

Տարրական դպրոցը, որպես կրթական համակարգի կարևորագույն օղակ, կոչված է լուծելու կրտսեր դպրոցականների էկոլոգական դաստիարակության խնդիրները, ուստի էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը համարվում են տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի գերակա ուղղություններից մեկը:

Էկոլոգիական դաստիարակությունը, որպես անձի ամբողջական դաստիարակության բաղադրամաս՝ իրականացվում է դաստիարակության մյուս ուղղությունների՝ գեղագիտական, բարոյական, աշխատանքային, քաղաքացիական, տնտեսագիտական, իրավական, ընտանեկան դաստիարակության հետ: Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային և կարևորագույն գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների՝ «Ես և շրջակա

աշխարհ»,«մայրենի», «մաթեմատիկա», «կերպարվեստ», «երգ – երաժշտություն»,«տեխնոլոգիա» և այլ առարկաների միջոցով:
Բացի դպրոցից էկոլոգիական դաստիարակություն իրականացվում է բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբակներում: Էկոլոգիական դաստիարակության և կրթության մեջ առանձնակի կարևորվում է բարոյական տեսանկյունը, որը իրենից ներկայացնում է պատշաճ վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ: Երեխաների էկոլոգիական կրթությունն իրականացվում է երեք փոխկապակցված գործընթացների՝ կրթության, դաստիարակության և զարգացման միջոցով, այն ուղղված է անձի բնապահպանական մշակույթի զարգացմանը, մարդկային փոխազդեցության և հոգևոր փորձի հարստացմանը՝ ապահովելով դրա գոյատևումը և զարգացումը:

Դիտարկենք երեք փոխկապակցված գործընթացների էությունը:

1.Էկոլոգիական կրթությունը ենթադրում է՝ փոխկապակցված բնական երևույթների, օրինաչափությունների, կենդանի ու անկենդան բնության միասնության, մարդու, հասարակության և բնության մասին ունեցած գիտելիքների ձևավորում.
Էկոլոգիական հիմնախնդիրների լուծում, մտավոր, բնապահպանական, շրջակա միջավայրի գնահատման, բարելավման, կարողությունների և գործնական ունակությունների զարգացում, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորում: Այսինքն՝ էկոլոգիական կրթությունն ենթադրում է կոլոգիական գիտակցության
ձևավորում:
2. Էկոլոգիական դաստիարակությունը ենթադրում է՝ էկոլոգիական աշխարհայացքի,
էկոլոգիապես արդյունավետ վարքի, գործունեության պահանջմունքի, սովորույթի, բնական և սոցիալ-մշակութային միջավայրի, կյանքի, առողջության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի էկոլոգիական խնդիրների և հարցերի մասին գեղագիտական, բարոյական, դատողություններ կատարելու կարողության ձևավորում, շրջակա միջավայրի պահպանության ակտիվ գործունեության ձգտում:
Այսինքն՝ մարդու մոտ բնության նկատմամբ պատշաճ վերաբերմունք կարելի է ձևավորել էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցով:

3.Էկոլոգիական զարգացումը ենթադրում է բնաճանաչողական, բնապահպանական,
բնական պաշարների խնայողական օգտագործման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, արժեհամակարգի քանակական և որակական դրական փոփոխություններ, որն արտահայտվում է, շրջակա միջավայրի պահպանման, գործնական աշխատանքներին անձամբ մասնակցելու ցանկությամբ: Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը կապված է նրանց տարիքային և անհատականառանձնահատկությունների հետ:
Ա.Օ.Թոփուզյաննիր <<Հումանիստական դաստիրակություն>> աշխատությունում նշում է՝ ուսումնադաստիարակչական գործընթացի գերագույն արժեը ու դեմքը երխան է: Ուստի կարևոր է ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպել այնպես, որ չվնասել երեխային: Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ
բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակմանը, որն էլ իր հերթին հարստացնում և ապահովում է նրանց ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը: Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հաստատություններում, մանկական կրթական-ժամանցային կենտրոններում:

ԹԵՄԱ 2 Կրտսեր դպրոցականների դաստիարակության և զարգացման առանձնահատկությունը

Կրտսեր դպրոցականների դաստիարակության և զարգացման առանձնահատկությունը Էկոլոգիական դաստիարակությունն անձի ձևավորման կարևորագույն բաղադրամասն է, որի հիման վրա անձը կրթվում և դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով: Էկոկրթական խնդիրներին համալիր լուծում տալու նպատակով, նախկին խորհրդային պետություններից առաջինը Հայաստանն է ընդունել «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը: 2009թ ՀՀ կառավարության թիվ 47 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը: Մեկ տարի անց հաստատվել է հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիր, որի շրջանակներում կրթության ոլորտի լիազոր մարմնի՝ կրթության և գիտության նախարարության հետ իրականացվել են մի շարք միջոցառումներ: ՀՀ կառավարության 2017թ գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների մեջ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ ընդգրկվել է էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության մշակման հարցը: ՀՀ օրենքը2009թ նոյեմբերի 12-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ – ում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը»: 2009թ հունիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը հանրակրթության սկզբունքների թվում սահմանում է նաև աշակերտների մոտ բնապահպանական աշխարհայացքի ձևավորում: Բնապահպանական կրթության վերաբերյալ պահանջները տարածվում են նաև ֆիզիկական, մտավոր, և հոգեկան զարգացվածության թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվող հանրակրթության վրա: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշակերտների շրջանում էկոլոգիական կրթության կազմակերպման և այդ բնագավառում նրանց գիտելիքների և իրազեկվածությանբարձրացման նպատակով

հանրակրթության ոլորտում իրականացվում է մի շարքծրագրեր, որոնցից կարևոր է համարվում ՝ հանրակրթական տարրական դպրոցում (1-6 – րդ դասարաններ) էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը, որը իրականացվում է մեծ մասամբ «Ես աշրջակա» աշխարհը և << Բնագիտություն>> դասընթացի միջոցով:

Էկոլոգական դաստիարակությունն ունի փուլային բնույթ՝ Էկոլոգիական պատկերների և հասկացությունների ձևավորում: Մարդակենտրոն էկոլոգիական գիտակցությունից անցումը էկոկենտրոնգիտակցության: Էկոլոգիական գործունեության իրականացում: Բնության մեջ և շրջապատում անվտանգ վարքգծի ձևավորում: Էկոլոգիական մշակույթի ձևավորում: Ըստ Ի.Ս Սուրավեգինայի և Վ.Մ Սենկևինչի էկոլոգիական դաստիարակությանհամար պետք է որոշել երեք խնդիր՝

1.Կրտսեր դպրոցականների գիտակցությանը հասցնել, որ բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է:

2. Դպրոցականներին օգնել հասկանալու, թե ինչի համար մարդը պիտի իմանա, հասկանա բնության և մարդու կապը, այսինքն՝ իր գործունեությանընթացքում չխախտի դա, որովհետև այդ կապերի խախտումը կարող է առաջ բերել մարդու և բնության համար անդառնալի հետևանքներ:

3.Երեխաներին օգնել կազմակերպել իր վարքն բնության և շրջակա միջավայրի մեջ ՝ իրենց ստացած գիտելիքների հիման վրա:

Տարրական դասարաններում էկոլոգիական կրթության խնդիրներն են ՝

- Դպրոցականների էկոլոգիական գիտակցության և կուլտուրայի ձևավորում:
- Բնության հետ շփվելու պահանջմունքի ձևավորում և գեղագիտական պահանջմունքների բավարարու:
- Բնապահպանական, բնաճանաչողական ընդունակությունների զարգացում ՝ պատասխանատվության և խղճի զգացմունքների ձևավորում:
- Դպրոցականների էկոլոգիական հարցերի վերաբերյալ անհրաժեշտ ունակությունների և հմտությունների մշակում:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության առաջին պայմանը ուսուցչի մեթոդական պատրաստվածությունն է: Ուսուցման գործընթացում սովորողների կողմից բնության մասին տեսական գիտելիքները յուրացնելըբավական չեն, այն պետք է համակցել գործնականի հետ՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերելով բնության պահպանմանը և

բարեկարգմանը:
Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնական նպատակը նրանց մոտ էկոլոգիական գիտակցություն ձևավորելն է, սովորողների անհատական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վիճակի նկատմամբ անձնական պատասխանատվության զգացումի դաստիարակումը:
Էկոլոգիական դաստիարակության ռազմավարական նպատակը էկոլոգիապես կրթված ու դաստիարակված անձի ձևավորումն է, որն օժտված է էկոլոգիական գիտակցությամբ, էկոլոգիական մտածողությամբ և աշխարհայացքով, էկոլոգիական մշակույթով և վարքով, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների համակարգով և պատասխանատվության զգացումով:
Էկոլոգիական կրթության նպատակն է «շրջակա միջավայրի նկատմամբ ձևավորել պատասխանատու վերաբերմունք, որը կառուցված է բնապահպանական իրազկության հիման վրա»:Ժամանակակից էկոլոգիան համարվում է կիրառական համալիր գիտություն: Էկոլոգիական դաստիարկությունը ենթադրում է էկոլոգիականգիտելիքների կուռ համակարգի յուրացում, էկոլոգիական արժեքների փոխանցում սովորողների էկոկոնկրետ գիտակցության և վարքագծի ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած է էկոլոգիական հասկացությունների, գիտելքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը: Էկոլոգիական կրթությունը որպես սովորողի էկոլոգիական դաստիարակության հիմնական միջոց, նպաստում է տարրական դպրոցում սովորող աշակերտի բնաճանաչողական ընդունակությունների զարգացմանը, բնության նկատմամբ
վերաբերմունքի ձևավորմանը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար առավել արդյունավետ և կիրառական են հետևյալ մեթոդները՝ զրույց, բանավեճ, պատմում, ինտերակտիվ քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, էկոլոգիական ուղղվածության առաջադրանքներ, էկոլոգիական իրավիճակների մոդելավորումներ, դերային խաղեր, ուսումնահետազոտական նախագծեր:
Գործնականորեն օգտակար, արդյունավետ են ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ
տեխնոլոգիաների նպատակային կիրառումը:
Էկոլոգիական դաստիարակության առավել արդյունավետ մեթոդ է բանավեճը: Բանավեճի թեմայի ընտրության ժամանակ հաշվի է առնվում կրտսեր դպրոցականի էկոլոգիական

գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճի հիմնական նպատակը նպասել սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների, և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը: Էկոլոգիական բովանդակությամբ խաղի պլանավորումը ենթադրում է՝ որոշակի իրավիճակում բնապահպանական և բնօգտագործման փորձի յուրացումը: Խաղը ընդգրկում է մի քանի փուլեր՝ նպատակադրում,
պլանավորում, իրականացում արդյունքների վերլուծություն: Խաղը ուղղված է էկոլոգիական տարբեր խնդիրների քննարկմանը՝ փոխներգործության ու երկխոսության պայմաններում: Էկոլոգիական խաղը նպաստում է էկոլոգիական գիտելիքների ամրապնդմանը և ձևավորմանը, էկոլոգիական, ազգային, մշակութային արժեքների ինտեգրմանը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում ուսուցիչը պետք
է հասկանա տվյալ իրադրության ժամանակ մեթոդների արդյունավետ համադրման անհրաժեշտությունը: Էկոլոգիական բովանդակությամբ նյութերի յուրացման համար նպատակահարմար է կիրառել ուսուցման տարբեր մեթոդների համատեղում, որի նպատակը խմբայինքննարկումների, դերային խաղերի, միջոցով հասնել հաղորդվող նյութի
հիմքային ընկալմանը, գիտելիքների ձևավորմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը կիրառելով աշակերտակենտրոն ուսուցում:
Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար էական կարևորություն ունեն մեթոդաբանական հետևյալ պահանջները.
Ուսումնական գործունեութան իրականացման մեջ առանձնացնել գլխավոր օղակը:
Ընդհանրացնել այդ գործընթացի խնդիրներն ու բովանդակությունը,
սպասվող արդյունքները:
Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում կիրառվող մեթոդների հիմնական նպատակն է սովորողներին սկզբնական պատկերացումներ տալ աշխարհի ամբողջական գիտական պատկերների մասին, ցույց տալ մարդու կենսագործունեության անմիջական կապը շրջակա միջավայրի հետ, զարգացնել շրջապատող աշխարհը հուզականորեն ընկալելու կարողությունը, ձևավորել էկոլոգիական մշակույթը: Պատահական չէ, որ մեծ մանկավարժ Վ.Ա.Սուխոմլինսկին նշում է.

«Յուրաքանչյուր մարդ մանուկ հասակում պետք է անցնի հուզական դպրոց՝ բարի զգացմունքների դաստիարակության դպրոց՝ ծնված շրջապատող աշխարհի գեղեցկության համար կատարած աշխատանքում, հոգատարության անհանգստության մեջ»]:Տարատեսակ մեթոդների կիրառումը էկոլոգիական դաստիարակության և կրթության գործընթացում կարող է տեսանելի արդյունք տալ եթե ապահովեն հետևյալ պահանջները՝

դպրոցականների էկոլոգիական գործունեության գնահատման

օբյեկտիվությունը,

համակարգվածությունը,

դաստիարակչական և ուսուցողական ուղվածությունը,

ուսուցման տեխնոլոգիայի մասնաբաժնի մեծացումը, որը ենթադրում է կրտսեր դպրոցականների ՝ էկոլոգիական ուղղվածությամբ ինքնուրույն աշխատանքների իրականացում:

ԹԵՄԱ 3 էկոլոգիական դաստիարակության տեխնոլոգիաների կիրառումը կրտսեր դպրոցում

21-րդ դարի կրթական համակարգում անհրաժեշտություն է դարձել նորարարական տեխնոլոգիաների ներդրումը: Ներկայումս կարևորվում է կրթական համակարգի բոլոր մակարդակներում՝ էկոլոգիական կրթության իրականացումը նոր ձևրով: Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը ավելի արդյունավետ կիրականանա, եթե այն ունենան ինտեգրված մոտեցում, և ոչ թե առարկայական մեկուսացում: Էկոգիական գիտելիքների պրակտիկ կիրառման խնդիրը բավականին բարդ է: Տեսական նյութի յուրացման համար խիստ կարևորվում է ուսուցման մեթոդների միջոցների ձևերի և տեխնոլոգիաների արդյունավետ համադրումը: Տարրական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման ընթացքում «բնագիտություն » ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում կարելի է նախաձեռնել և իրականացնել հետևյալ

նախագծերը՝ Խաղային նախագծեր՝ կենդանիներին, բուսերին նվիրված զանազան

խաղեր, որոնց հիմքում պիտի լինեն բնաճանաչողական նշանակությունը և նպաստում են խմբային աշխատանքների զարգացմանը: Էքսկուրսիոն նախագծեր, որոնք գործածական են «մարդ-բնություն- հասարակություն» համակարգում արտացոլվող հիմնախնդիրների ուսումնասիրման պարագայում՝ «Մենք և տիեզերքը», «Մեր այգում աշուն է», «Հայրենի բնաշխարհի գանձերը» և այլն : Պատմողական նախագիծ՝ ուսուցանվող նյութի մասին որևէ հավելյալ ինֆորմացիայի ներկայացում գրավոր, բանավոր, բեմականացում, հեքիաթներ, պատմվածքներ և այլն:Կառուցողական նախագծեր՝ արդյունավետ առարկաների՝ թռչնի բների կառուցում, չորացած տրերևներով և ծաղիկներով աշնանային կոմպոզիցիաների պատրաստում: Օգտակար գործունեություն՝ շաբաթօրյակների կազմակերպում, կանաչապատում և այլն:

Հավելված 1

5 քայլով դասի պլան

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը
Դասարան՝ 2
Դասի թեմա՝ Եղի՛ր բնության բարեկամ
Ուսուցիչ՝ Բաղդասարյան Աննա
Դասի նպատակը
Սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորումը, մարդ-բնություն փոխազդեցությունը, մարդու դերը որպես բնության մի մասնիկ, էկո-գիտելիքների ինտեգրումը և մտածված և չմտածված քայլերի հետևանքների ազդեցությունը բնության վրա:
Դասի ավարտին սովորողը կկարողանա
Ստեղծել բնության պահպանության կանոններ և նշաններ
Տարբերակել աղբի տեսակները ըստ վերամշակման նշանակության
Գիտակցել մարդու անգիտակից արարքների հետևանքները
Դասի ավարտին սովորողը կիմանա
Բնությունը պահպանելու կանոնները
Բնության կարևորությունը կենդանի օրգանիզմների կյանքում
Անհրաժեշտ նյութեր – պաստառ, դասագիրք, քարտեր, ծրար, գունավոր մատիտներ, ինքնաշեն գործարան և աղբաման, տեսասահիկ, ինքնակպչուն թղթեր:
<u>1 Դասի սկիզբ</u>

Ինտերակտիվ հարցադրումներով ամփոփել նախորդ թեման «Վայրի և ընտանի կենդանիներ» , Վեննի դիագրամի միջոցով նշել նրանց նմանությունները, տարբերությյունները և ցույց տալ նրանց կապը մարդու և բնության հետ:

Ֆիզկուլտ դադար –ավագ ընկերների կողմից կազմակերպված բեմականացման դիտում, Աղայանի «Ծառերի գանգատը» բանաստեղծությունը:

<u>2 Նոր նյութի հաղորդում</u>

Տեսանյութի միջոցով սովորողներին բացատրել այն բոլոր վտանգներն ու աղետները, որոնք առաջացել են բնության մեջ և կարող են շարունակական դառնալ , եթե մարդիկ

չսկսեն ճիշտ, խնայողաբար օգտվել բնության բարիքներից և չդադարեցնեն աղտոտել շրջակա միջավայրը:

Դասարանը բաժանել 4 խմբի, «Բնության բարեկամներ» անվանումով, հանձնարարել ստեղծել բնության պահպանության նշաններ և մշակել համապատասխան կանոններ, ընտրել դրանց կիրառման վայրը , որոնք կօգնեն պաշտպանել բնությունը: Ուսուցիչը ներկայացրեց աշխատանքի մեկ նմուշ օրինակ:

4 Ինքնուրույն աշխատանք

Հետևյալ բաառակապակցությունները դասավորել համապատասխան սյունակում.

Ծառ տնկել, աղբը տեսակավորել, թռչնաբներ կառուցել, որսորդություն անել, ծառեր կտրել, անտառը այրել, պլաստիկ օգտագործել, օդը աղտոտել

Ուրախ մոլորակ	Տխուր մոլորակ

5 Դասի ավարտը

Քառաբաժան մեթոդով ամփոփվեց դասը

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ զգացի	Խորհուրդ մարդկանց

Գնահատում – ձևավորող, ըստ սանդղակի

1. Սեփական դիրքորոշում հայտնելը
2. Պասիվ մասնակցին քննարկման մեջ ներքաշելը
3. Անցած թեմաներից օրինակներ բերելը
4. Համագործակցելը

5. Կարգապահ լինելը

Տնային առաջադրանք- անցնել հղումով, դիտել տեսանյութը, գրել նամակ մարդկանց:

34

Հավելված 2

- **5 քայլով դասի պլան.**

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Դասարան՝ 2

Դասի թեմա՝ Կարմիր գիրք

Ուսուցիչ՝ Մարտիրոսյան Մարգարիտա

Դասի նպատակը

Սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորումը, մարդ-բնություն փոխազդեցությունը, մարդու դերը որպես բնության մի մասնիկ, էկո-գիտելիքների ինտեգրումը և մտածված և չմտածված քայլերի հետևանքների ազդեցությունը բնության վրա, սովորողների խնայողական վերաբերմունքը Կարմիր գրքում ընդգրկված բույսերի ու կենդանիների նկատմամբ:

- Դասի ավարտին սովորողը կկարողանա
- Ճանաչել և տարբերակել բնության պահպանության կանոնները և նշանները
- Գիտակցել մարդու անգիտակից արարքների հետևանքները
- Տարբերակել Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների որոշ տեսակներ՝
- Դասի ավարտին սովորողը կիմանա:
- Բնությունը պահպանելու կանոնները
- Բնության կարևորությունը կենդանի օրգանիզմների կյանքում.

Հայաստանի Հանրապետության արգելոցների, ազգային պարկերի դերն ու նշանակությունը կարմիր գրքի կառուցվածքը ըստ էջերի գույների, անհետացման եզրին գտնվող բույսերի և կենդանիների տեսակները՝

Անհրաժեշտ նյութեր – պաստառ, դասագիրք, քարտեր, ծրար, գունավոր մատիտներ, տեսասահիկ, ինքնակպչուն թղթեր:

1 Դասի սկիզբ.

Մտագրոհ մեթոդով ներկայացնել «Բնության պահպանություն» եզրույթի նշանակությունը և բաղադրիչները: Տեսասահիկով ներկայացնել տնային առաջադրանքը՝ երեխաների առաջին քայլերը՝ ուղղված բնության պահպանությանը

2 Նոր նյութի հաղորդում.

Զրույցի մեթոդով ներկայացնել մարդու գիտակից և անգիտակից արարքների ազդեցությունը ուղղված բնությանը հասցված վնասին: Խոսել Կարմիր գրքի բովանդակության և նշանակության մասին, տեղեկություն տալ ՀՀ արգելոցների ազգային պարկերի վերաբերյալ

3 Ուղղորդված աշխատանք.

Դիդակտիկ պաստառների օգնությամբ գործնականորեն ցույց տալ բնությանը հասցվող վտանգների

հետևանքները.

Դասարանը բաժանել խմբերի, տեսանյութից առանձնացնել անհետացման եզրին գտնվող բույսերի և կենդանիների որոշ տեսակներ:Պաստառներ պատրաստել վերոհիշյալ կենդանիների և բույսերի վերաբերյալ, տալ որոշակի տեղեկություններ:

4 Ինքնուրույն աշխատանք

Տրված բույսերի կամ կենդանիների նկարներից ընտրել, կտրել սոսնձել այն տեսակը, որը գրանցված է ՀՀԿարմիր գրքում: Աշխատանքին կից նկարել ընտրված տեսակի պահպանությանն ուղղված պայմանանշանը:

5 Դասի ավարտը.

Զուգահեռներ տանել անհետացող բույսերի, կենդանիների և մարդկային արժեքների միջև: Կարմիր էջերից սպիտակ էջեր տեղափոխել հետևյալ բարոյական որակները՝ սերը, հարգանքը, բարությունը, ազնվությունը, խիղճը: Աշխատանքի արդյունքում ստեղծել օրվա դասանյութին համապատասխան կարգախոսը:

Գնահատում – ձևավորող, ըստ սանդղակի

1. Սեփական դիրքորոշում հայտնելը

2. Պասիվ մասնակցին քննարկման մեջ ներքաշելը

3. Անցած թեմաներից օրինակներ բերելը

4. Համագործակցելը

5. Կարգապահ լինելը

Տնային առաջադրանք- անցնել հղումով Կարմիր Գրքում Գրանցված Կենդանիներ և Բույսեր // AshLion - YouTube և ծանոթանալ անհետացման եզրին գտնվող կենդանիներին, ընտրել դրանցից որևէ մեկը և պատրաստել անձնագիր, լրացնելով հետևյալ կետերը

- տեսակի անունը
- ապրելակերպը
- սնունդը
- տարածվածությունը:

Հետազոտություն 4-րդ դասարաններում

Որպեսզի լուծենք մեր առջև դրված խնդիրներն ու նպատակները ՝ նախ և առաջ հարցաթերթիկի միջոցով պարզել ենք, թե տարրական դպրոցի չորրորդ դասարաններում աշակերտների բնապահպանական ինչ գիտելիքների կարողությունների և հմտությունների են տիրապետում:

Տարրական դպրոցի աշակերտների շրջանում իրականացրած հարցաթերթիկի հարցաշարը ուղղված է նրանց էկոլոգիական և բնապահպանական գիտելիքների կարողությունների և հմտությունների բացահայտմանը:

Հարցաշարը կազմված է 7 հարցից և հարցմանը մասնակցել են տարրական դպրոցի չորրորդ դասարանի 110 աշակերտներ:

1. Սիրում եք բնությունը
2. 110 պատասխան

1.Սիրում եք բնությունը ՝



2.Ինչ եք հասկանում բնություն ասելով՝



- Միջավայր որտեղ մարդը ապրում է
- Բույսերի և մարդկանց ամբողջեությունը

3.Բնությունը պահպանելու համար անհրաժեշտ է՝



- Էկոլոգիական գիտելիքների յուրացում
- Բնության նկատմամբ պատասխանատվություն
- Մասնակցել բնության մաքրությունը

4.Մեքենաների ծուխը ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ բույսերի վրա `



- կարող է վնասել բույսերին
- Կարող է նպաստել բույսերի աճին
- Վտանգաոր հետրանք չունի

5.Ինչ եք կարծում, ծառահատումները ինչպիսի հետևանքներ կարող ունենալ՝



- Կմեծանա մթնոլորտի ախտոտվածությունը
- Կառաջանա թթվածնի պակաս
- Կոչնչանա շատ կենդանիների և բույսեր կաղտոտի խմելու ջուրը

6. Թուղթը խնայողաբար եք օգտագործում՝



- Այո քանի որ չեմ ուզում վնասել բնությանը
- Երբեմն մտածում եմ այդ մասին
- Անգամ չեմ մտածել այդ մասին

7. Եթե ձեր խնամքի տակ լինի փոքրիկը, կանաչապատ տարածք՝ այգի, ինպես կվարվեք `



- Կմշակեմ այգին՝ կփղրեցնեմ հողը, ջորեմ ծառերը
- Ինձ հետաքրքիր չի այգին, թող ուրիշը հոգ տանի
- Կկտրեմ ծառերը և խաղահրապարակ կդարձնեմ

Եզրակացություն

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եկանք հետեւյալ եզրահանգմանը.

1. Մեր հետազոտության արդյունքում պարզ դարձավ,որ դպրոցում ավելի արդյունավետ է սովորողների բնապահպանական վարքագծի ձեւավորումը: Այդ տարիքում աշակերտներն առավել հետաքրքրված են որոշ էկոլոգիական իրավիճակներով, մասամբ կարող են գիտակցել այն վտագները, որոնք առաջանում են բնության:նկատմամբ անփույթ, անպատասխանատու վերաբերմունքի արդյունքում:

2. Մեր դիտարկումները փաստում են, որ բնապահպանական միջոցառումները մեծ ներուժ ունեն կրտսեր դպրոցականների աշխարհաճանաչողության ձեւավորման գործում: Դրանց իրականացումը նպաստում է բնապահպանական կարողությունների, բնության նկատմամբ արժեքային վերաբերմունքի զարգացմանը: Այդ պատճառով պետք է ավելի հետաքրքիր եւ էկոկողմնորոշված դարձնել ուսումնական գործընթացը եւ շարունակ առաջադրել նոր մեթոդական մոտեցումներ:

3. Կատարելով հետազոտություններ աշակերտների, ուսուցիչների շրջանում՝ եկանք այն եզրակացության, որ աշակերտները սիրով եւ հոգատարությամբ են լցված բնության նկատմաբ, գիտեն իրենց դերը բնության պահպանության հարցում, իսկ ուսուցիչները պատրաստակամ՝ փոխանցելու այն համապատասխան գիտելիքները, որոնք կխթանեն կրտսեր դպրոցականների բնապահպանական վարքագծի ձեւավորմանը:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երեւան, Մանկավարժ, 2005թ.,454 էջ:

3. Աջամօղլյան Ա. Գ., Էկոլոգիական հանրակրթության հիմնախնդիրները,Երեւան ԵՊՀ, հրատարակչություն 2004 թ., 112 էջ:

4. Ասատրյան Լ.Թ, Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ,Երեւան, Արտագերս 2009թ., 335 էջ:

5. Ասատրյան Լ.Թ,Սարգսյան. Փ.Ա., Նախադպրոցական եւ կրտսեր դպրոցական տարիքի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը

6. <<Զանգակ 97>>, հրատ, 2002 թ., 95 էջ:

7. Ասատրյան Լ.Թ եւ ուրիշներ, Մանկավարժություն, Երեւան, Արտագերս, 2017թ., 358 էջ:

8. Ասատրյան Մ.Ա Էկոլոգիակ կրթության դերը ընդհանուր եւմասնագիտական կրթության համակարգում, Մանկարավրժական մտքի հանդես 2002թ թիվ 1-7էջ:

9. Ավանեսյան Լ.Գ, էկոլոգիական դաստիարակության նպատակները, խնդիրները ու սկզբունքները, Մանկավարժական մտքի հանդես թիվ 8 Երեւան, 2001թ, էջ 60-64:

10. Բաղդասարյան Ա.Ա Բնապահպանական եւ բնօգտագործման կուլտուրայի ձեւավորման միջոցները ու ձեւերը հիմնական դպրոցում:, Ատեախոսություն Մանկ,գիտ , թեկ 2014թ;

11. Գեւորգյան Ս. եւ ուրիշներ, Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում, Երեւան, Տնտեսագետ, 2014թ., էջ 17-18:

12.Թոփուզյան Ա.Օ, Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Եր.: Լինգվա 2009թ, 297 էջ

13.Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ., Տողանյան Ն, Ավագյան Լ. << Ես եւշրջակա աշխարհը, դասագիրք, 4-րդ դասարան>>: Երեւան Մանմար, 2018թ.: 16.ՀՀ.էկոլոգիական կրթության մասին օրենքը, Երեւան 2002թ., 25 էջ: 17.20.11.2001թ.

14. Հ.Հ Պետտրոսյան, Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, ԵրեւանԱ.Ն ջոբ 2008 թ: